Հաստատում եմ՝
ԵՊՀ ռեկտոր
Է. ԱՍՐԻՅԱՆ
01.06.2023

ԿԱՐՄԻՔ

Աննա Մարատի Սարգսյանի «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» թեմայով ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին: (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի 2023 հունիսի 1-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 9)

Ելույթ ունեցան պրոֆ. Պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը:

Նշվեց, որ Աննա Մարատի Սարգսյանի «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» թեմայով աշխատանքը կատարվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Պաշտպանությունը կայանալու է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ Աննա Մարատի Սարգսյանի՝ «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» թեմայով ատենախոսությունը շարադրված է ատենախոսություններին ներկայացվող կառուցվածքային սկզբունքներով: Ատենախոսը աշխատանքի կառուցվածքային տրոհումը կատարել է՝ որպես ելակետ ընդունելով և՛ գրական երկերի ժամանակագրական հաջորդականությունը, և՛ թեմատիկ ընդհանրությունները:

Ներածությունից, «20-րդ դարի ուսանող մտավորականության նկարագիրը», «Մտավորական-միջավայր փոխառնչությունների քննության փորձ» («Պոլսական միջավայրի ազդեցությունը մտավորական կերպարների ինքնարտահայտման վրա»,

«Հայրենասիրությունն իբրև գաղափար և վարքագիծ», «Առաջադեմ մտավորականի սիրո ընկալումները» ենթագլուխներով), «Գրողի քաղաքական նոր ըմբռնումների անդրադարձը» վերնագրերով երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից բաղկացած, 162 համակարգչային էջ կազմող ուսումնասիրությունը թեմայի քննարկման՝ համակարգայնությամբ հատկանշվող հաջողված փորձ է: Ընտրված նոր դիտանկյունը Սարգսյանին հնարավորություն է ընձեռել Զապել Եսայանի՝ շատ կողմերով ուսումնասիրված և արժևորված գործերի գաղափարագեղագիտական կառույցում հայտնաբերելու ուշագրավ և կարևոր իրողություններ և պատշաճ գիտական ձևակերպում տալու դրանց: Հարցի պատմության քաջիմացության, տեսաբանական անհրաժեշտ պատրաստվածության («մտավորական» եզրույթի ճշգրտում, գրականագիտական գնահատումների վկայակոչումներ, ժանրային որոշադրումներ, արդյունավետ մեթոդական գործիքակազմ), գրողի կենսագրության և ժամանակի պատմաքաղաքական իրադրության դիտարկման, շահեկան գրապատմական անդրադարձների և համեմատությունների շնորհիվ ատենախոսության հեղինակին հաջողվել է բացահայտել, իր իսկ ձևակերպմամբ, «մտավորականի եսայանական մոդելը», որի նպատակը Եսայան գրողին ճանաչելու սահմաններն ընդլայնելն է:

Ներածության մեջ շեշտադրվել են ուսումնասիրության առարկան, հարցի պատմությունն ու մշակվածության աստիճանը, հիմնավորվել են աշխատանքի կառուցվածքը, գիտական նորույթը, մեթոդական հիմքերը, ներկայացվել են գրողի կյանքն ու գրական ուղին:

Առաջին գլխում, որը վերնագրված է «20-րդ դարասկզբի ուսանող մտավորականության նկարագիրը», քննվել են «Սպասման սրահին մեջ» և «Կեղծ հանճարներ» վեպերը, 20-րդ դարասկզբի ուսանող մտավորականության կերպավորման առանձնահատկությունները, գրական զուգահեռներ են տարվել գրողի ինչպես տարբեր հոդվածների, այնպես էլ փոքր կտավի գործերում պատկերված ուսանողների կերպարների հետ: Հեղինակն անդրադարձել է «Կեղծ հանճարներ» վեպին՝ շեշտադրելով Փարիզում հայտնված հայ ուսանողության եսայանական գնահատումները, ընդգծելով «նրանց՝ նախնառաջ կերպար լինելու հանգամանքը՝ միաժամանակ դիտակետում պահելով կերպար-նախատիպ (Տաճատ Չարըքյան-Տիրան Չրաքյան, Սուրեն Սահակյան-Սուրեն Պարթևյան, Անտոն Յարայան-Սիամանթո և այլն) աղերսները»:

Հատկապես հաջողված են «Կեղծ հանճարներ» վեպի ուսումնասիրման շրջածիրում կատարված կերպար-նախատիպ առնչության պարզաբանումները, Եսայանի՝ աչքերի և հայացքի բնութագրմամբ, համեմատական եզրերի զուգադրմամբ հատկանշվող, «կեղծի» և «անկեղծի» հակադրությամբ ամբողջացող կերպարակերտման սկզբունքի վերհանումը,

մտավորականի և միջավայրի բախման, ուսուցչի դերի և սերնդի դաստիարակության ցավալի ու ցանկալի դրսևորումների գեղարվեստական պատկերավորման քննությունը, հեզության և ըմբոստության եսայանական ընկալման լուսաբանումը, Եսայանին վերագրվող ֆեմինիզմին ուղղված սթափ հայացքը, «աքսորյալ արվեստագետ» երևույթի ընկալման և մեկնաբանության բազմաշերտությունը:

Հիմնվելով Զ.Եսայանի ստեղծագործությունների վերաբերյալ գրականագիտական դաշտում եղած հետաքրքիր գնահատումների վրա՝ ատենախոսը ինքնատիպ դիտարկումներով ամբողջացրել է նրանցում արծարծված գաղափարական հարցադրումները, կերպարակերտման արվեստի ինքնատիպությունը:

Աշխատանքի երկրորդ գլուխը վերնագրված է «Մտավորական-միջավայր փոխառնչությունների քննության փորձ»: Այստեղ վերլուծությունը կատարվել է ելակետային երեք մոտեցումներով՝ պոլսական միջավայրի ազդեցությունը մտավորական կերպարների ինքնարտահայտման վրա, հայրենասիրությունն իբրև գաղափար ու վարքագիծ և առաջադեմ մտավորականի սիրո ընկալումները: Ինքնատիպ դիտարկումներով բացահայտվել են մտավորականի կյանքի ողբերգական ընթացքի պատկերակերտման առանձնահատկությունները, մտավորական-միջավայր բախման հիմքերը, գրողի վերաբերմունքը կրթության, դաստիարակության, ազգի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի շուրջ: Հետաքրքիր շեշտադրումներով քննարանվել են նաև հեղինակի «հայրենաբաղձության» դրսևորումները, ցույց են տրվել մտավորականի՝ ներկայից օտարվելու հիմքերը և նրա ջանքերը աքսորված հոգու հետդարձի որոնումների ճանապարհին:

Երրորդ գլխում («Գրողի քաղաքական նոր ըմբռնումների անդրադարձը») ատենախոսը քննել է Զ.Եսայանի քաղաքական նոր հայացքները՝ դրանք դիտարկելով հասարակական-քաղաքական նոր իրողությունների համատեքստում: Սարգսյանն ընդգծում է, որ ազգային-ազատագրական պայքարի կողմնակից Զապել Եսայանի քաղաքական նոր՝ խորհրդային կողմնորոշումները հստակ ընդգծվեցին «Նահանջող ուժերը» և «Բարպա Խաչիկ» վեպերում: Ատենախոսը իրավացիորեն նկատում է, որ Եսայանը գրականություն բերեց մտավորականների ընդհանրացնող տիպական կերպարներ, որոնք, հերքելով գրողի նախկին ըմբռնումները, խորքային բնութագրումներով ընդհանրացնում են հայրենասեր, ազատասեր մտավորականի նկարագիրը:

Աշխատանքի վերջում համակարգվել են հետազոտության արդյունքում կատարված հետաքրքիր եզրահանգումները:

Մտավորականի դերի, ազգային միասնականության կարևորության, գեղարվեստավավերագրական փաստերի ճանաչողության բաղադրիչներով հիմնավորված

արդիականությունը, մտավորականության թեմայի քննաբանմանն ուղղված համակարգային մոտեցմամբ, քաղաքական իրադարձությունների ներկայացմանը զուգընթաց գրողի աշխարհընկալման առանձնահատկությունների վերհանմամբ, գրական առնչությունների որոշարկմամբ պայմանավորված նորույթը հայտնակերպում են սույն ուսումնասիրության արժեբանական նկարագիրը: Թեման իրավացիորեն լուսաբանվել է հեղինակի հրապարակախոսության, լայն կտավի երկերի և փոքր արձակի համադրական քննությամբ:

Ցավոք, ընդհանրության մեջ անուրանալիորեն հաջողված աշխատանքում առկա են նաև խնդրահարույց որոշ պահեր, ոչ այնքան հաջող լուծումներ, որոնց առնչությամբ պետք է անել հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսի հայացքն առավելապես ուղղված է հեղինակի գեղարվեստական արձակի գաղափարական հարցադրումներին, և երկերի բանարվեստի քննությունը որոշակիորեն մնում է ստվերում: Եթե կերպարակերտման առանձնահատկությունները խորքային դիտարկման և մեկնաբանության են արժանանում, ծավալային ընդգրկման առումով նույնը չի կարելի ասել եսայանական, նեղ ըմբռնմամբ, պատկերի քննության մասին: Աշխատանքի երկու հատվածներում «Հոգիս աքսորյալ» վիպակի կապակցությամբ Սարգսյանը նման հետազոտության փորձ է ձեռնարկում, որի ծավալումը ուշագրավ բացահայտումների կարող էր տանել: Խոսքը նախ վերաբերում է եսայանական գունընկալմանը (էջ 83): Նկատված գունապատկերային լուծումներից (ճերմակ, վարդագույն, մանուշակագույն, «լեղակագույն», ոսկի և սև) քննության առարկա է դառնում միայն կապույտը և այն էլ՝ Չարենցի «Ծիածանի» բանաստեղծություններից մեկի հետ մակերեսային զուգահեռումով: Վերոնշյալ գույների համակարգային դիտարկումը կնպաստեր հեղինակի պատկերամտածողության որոշարկմանը:

93-րդ էջում ատենախոսը գրում է. «Եսայանը «Հոգիս աքսորյալ» վիպակում յուրակերպ կերպարային համակարգ ստեղծելուն զուգահեռ բերում է նաև խորհրդանշական պատկերներ», որոնք, ըստ Սարգսյանի, ուղղված են գլխավոր հերոսուհու ներաշխարհի բացահայտմանը: Այդ «խորհրդանշական պատկերներից» դիտարկվում է միայն նոճին: Այսօրինակ քննությունը կարելի էր ծավալել ոչ միայն այս, այլև դիտարկված բոլոր երկերի քննության պարագայում:

Սարգսյանը Զ. Եսայանի ստեղծագործության արժևորումը կատարում է գրականության մեջ նույն թեմայի կամ գաղափարական հարցադրումների անդրադարձներին զուգահեռ, սակայն համեմատական-վերլուծական միտքը երբեմն խոր վերլուծությունների չի հասնում: Օրինակ՝ նշվում է Հ. Օշականի, Ար. Արփիարյանի, Եղ.Չարենցի, Վ.Թեքեյանի հետ ունեցած պատկերային և գաղափարական

ընդհանրությունների մասին, սակայն խոսքը սահմանափակվում է միայն երևույթի հիշատակությամբ:

2. Միջտեքստային դրսևորումների և գրական առնչությունների բացահայտումը սույն աշխատանքի առավելություններից է: Իրավացիորեն դիտարկվել և ներկայացվել է «աքսորյալ արվեստագետի» եսայանական ընկալման բազմաչափությունը, արժանավորապես հիշատակվել է նաև Է. Շաֆաքի վեպի հերոսուհիներից մեկի՝ Արմանուշ Չաքմաքչյանի «Մաղամ Վտարված Հոգի» կեղծանվան ընտրությունն ի պատիվ Զապել Եսայանի, սակայն երևույթը կարելի էր քննել նաև արվեստի մարդու չհասկացվածության, «հավիտյան վտարանդի» լինելու՝ չարենցյան համատեքստի, իր ձիրքի իրացման լիարժեքության մտահոգության՝ թումանյանական համատեքստի զուգահեռումով: Ատենախոսը մեջբերում է Եսայանի երկի հետևյալ հատվածը. «Ի՜նչ շռայլություն և պերճանք ամուլ մնացած: Այն բոլորը, որ կայ արդէն, այն բոլոր սերմերը որ պիտի ծաղկին, կարող են զարդարել դժուարահաճ ժողովուրդի մը գեղարուեստական կեանքը: Բայց այդ բոլորը ցրիւ են ու ամէն մէկը կղզիացած իր մէջ ու զրկուած այն կենսահիւթէն որ պիտի ուռճացնէր եւ ծաղկեցնէր այդ ընդունակութիւնները իրենց սկզբնական ուժին համեմատութեամբ» (էջ 91): Թումանյանական ընկալումը պարզող տողերն ինքնաբերաբար հայտնատեսվում են: Այս առումով ստացված են Թոլոյանի, Թեքեյանի և Մալկարացու զուգահեռվող ընկալումների հիշատակությունները:

3. Առհասարակ, ստեղծագործող անհատի, մասնավորաբար հայ արվեստագետի ազատության երազանքի համատեքստի ընդլայնումը կհարստացներ աշխատանքը: Ատենախոսը դիտարկում է «մտավորականի խրթին ուղին քաղաքականությամբ շնչող մթնոլորտում» (էջ 85): Ի դեպ, խնդիրը կարևորվում է 20-րդ դարասկզբի հայ մտավորականի աշխարհատեսության առումով, և եսայանական ընկալումները թերևս կարելի էր զուգահեռել «Մեհյանի» հանգանակի կետերից մեկում սահմանված «զուտ գրականությունը հեռու պահել քաղաքականութենե և լրագրութենե» երազանք-սկզբունքին: Հեղինակի՝ «աքսորյալ հոգու» տառապանքի մեջ մաս ուներ նաև ազգային մտահոգություններից վեր բարձրանալու, հայացքը «անհայտին» ու «հեռուն» հառելու անհնարինությունը

4. Ցանկալի կլիներ, որ Զ.Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպի քննությունը կատարվեր Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Ստ. Զորյանի ինքնակենսագրական վեպերի զուգահեռ վերլուծությամբ:

5. Կարծում ենք՝ աշխատանքի վերնագիրը կարելի է հստակեցնել, քանի որ «գեղարվեստականությունը» ոչ թե քննության է ենթակա, այլ վերլուծության, իսկ

«փորձը» թեականություն է հաղորդում և՛ Եսայանի, և՛ հայցորդի հասցեին: Պարզապես պետք էր վերնագրել «Մտավորականության կերպարները Զապել Եսայանի վիպագրության մեջ»:

6. Աշխատանքում նկատվում են վրիպակներ, որոնք որակ չեն կազմում (էջ 7, 32, 33, 36, 39, 54, 77, 79, 90, 96, 97, 101, 107, 116, 142):

Ի վերջո, սակայն, նկատված իրողությունները չեն ստվերում աշխատանքի նշված առավելությունները: Պաշտպանության է ներկայացված գնահատման արժանի հեղինակին նվիրված ծավալուն և ամբողջական մի ուսումնասիրություն, որ ընդհանրության մեջ գնահատելի ատենախոսություն է և արժանի է բարձր գնահատականի:

ՈՐՈՇԵՑԻՆ - Աննա Մարատի Սարգսյանի «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ուստի և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության պատմության
և գրաքննադատության ամբիոնի վարիչ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ամբիոնի վարիչի ստորագրությունը
հաստատում եմ

ԵՊՀ գիտքարտուղար Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ